Փոշին Իսլանդիայում է



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը երեկվա ասուլիսում հակադարձեց որոշ գիտնականների այն պնդումներին, թե ոլորտի գումարները փոշիացվում են: *«Փոշի որ չկա, ի՞նչը պետք է փոշիացվի: Փոշին Իսլանդիայում է և ծածկել է ամբողջ Եվրոպայի երկինքը: Մենք չունենք փոշի»*,- հեգնել է Ռ. Մարտիրոսյանը: Այնուհետև հավելել է, թե համակարգի ֆինանսավորումը չնչին է, և *«փոշիացում էլ որ լինի, էլ ի՞նչ կմնա»*: Ռ. Մարտիրոսյանը նաև համեմատություն է անցկացրել եվրոպական երկրների գիտական հաստատությունների հետ՝ ասելով, թե՝ իր դիտարկումները ցույց են տվել, որ եվրոպական գիտական ինստիտուտները 100 անգամ ավելի շատ են ֆինանսավորում ստանում, քան Հայաստանում: Ըստ նրա՝ Եվրոպայում մեկ գիտնականին տարեկան հատկացվող ֆինանսավորումը կազմում է 200.000 եվրո, իսկ Հայաստանում՝ ընդամենը 2000 եվրո: *«Սակայն հայ գիտնականի տված արտադրանքը ընդամենը երկու անգամ է գիջում եվրոպական նշված ինստիտուտների արտադրանքին: Լավ կլիներ, որ ոչ թե 100 անգամ, այլ գոնե 10 անգամ պակաս լիներ մեր ֆինանսավորումը, արդիականացվեր մեր հետազոտական բազան, ոլորտում սերնդափոխություն ապահովվեր»*,- նշեց նա:

Ի դեպ, Ռ. Մարտիրոսյանը դժգոհեց, որ Հայաստանում գիտական հետազոտությունները տնտեսության մեջ չեն կիրառվում, ինչի պատճառը ոչ թե հայ տնտեսվարողներն են, այլ հայկական շուկայի փոքր լինելը: *«Մարդիկ չեն կարող ռիսկի դիմել և գումարներ վճարել գիտնականի արտադրանքը գնելու համար: Իհարկե, նրանք հետագայում այդ գումարները ետ կստանան, սակայն հայկական շուկան իր մեջ ռիսկեր է պարունակում»*,- ասաց Ռ. Մարտիրոսյանը: